Բարև՛, սիրելի՛ հարևան Սոֆյա,

Նախ շնորհակալություն եմ հայտնում նամակիդ համար: Անունս Լաման է: Ձեզ գրում եմ Բաքվից: Ես լրագրություն եմ ուսումնասիրում: Ձեզ և ձեզ պես խաղաղության, արդարության կողմնակից մյուս երիտասարդների նամակներն ընթերցեցի մեծ հաճույքով: Որոշ առանձնահատկություններ ունես, որոնք գրեթե համընկում են, իսկ նամակում նշածդ մտքերի հետ համաձայն եմ: Ուրախության և խաղաղության զգացողություններ ունեցա այն հանգամանքից, թե ինչպես եք այսպիսի ոգևորությամբ լեցուն նամակ գրում անծանոթ մեկին, որին գուցե երբեք չեք էլ հանդիպելու:

Ինչպես դուք եք նշել, այս կյանքում խաղաղության, անդորրի, հանգստության, մշակութային բարգավաճման համար մեր առջև կա մեկ նպատակ: Պետք է համախմբվել մեկ գաղափարի շուրջ ու հասնել խաղաղության: Ցանկացած խաղաղասեր ժողովրդի, բոլոր մարդկանց, հատկապես երեխաների իղձն է, որ աշխարհում հաստատվի խաղաղություն, անդորր, արդարություն և անվտանգություն:

Արդարամիտ հասարակությունը ձգտում է մարդկության համար հավիտենական խաղաղության, և այս գաղափարը մարդու միտքն անհանգստացնող, նրան միշտ մտահոգող ամենահիմնական խնդիրներից է: Խաղաղություն նշանակում է կյանք, առողջ սերունդ: Ազատության, հավասարության ու արդարության հետ մեկտեղ խաղաղությունն այն գաղափարներից մեկն է, որի մասին ամենաշատն է երազում հասարակությունն ու ընդհանրապես մարդկությունը: Այս ամենը միասին վերցրած՝ նշանակում է առանձին երկրներում, աշխարհում շարունակական բարգավաճում ու փոխադարձ համագործակցություն:

Ես պատերազմ չեմ ուզում և գիտեմ, թե ինձ պես քանի–քանի ադրբեջանցի ու հայ երիտասարդ պատերազմ չեն ոզում. մենք ցանկանում ենք գտնել ընդհանուր դիրքորոշում ու կրկին ապրել համատեղ: Ես, որպես Ադրբեջանի քաղաքացի, ցանկանում եմ այցելել Հայաստան ու զբոսնել այնտեղ, ինչպես դա անում եմ Վրաստանում: Ես ցանկանում եմ, որ Կովկասը լինի մի վայր, որտեղ երկու երկրների քաղաքացիները կապրեն հավասար միջավայրում:

Անկեղծ սրտով՝

Լաման